# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ.Բռնակոթ, հեռ. 0283-61414

“ 25” հոկտեմբեր 2016թ. №39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N 25Ա 26Ա որոշումները:

Առդիր՝ /3/ թերթ:

Հարգանքով՝ Ա.Առաքելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բռնակոթ համայնք
3507. Սյունիքի մարզ գ. Բռնակոթ, հեռ. ( 0283 ) 6-14-14, brnakot @ mail. ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 Հոկտեմբեր 2016թ                                                                 թիվ 25Ա

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով.

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

*ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը:

1. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ՝ ______________ Առաքելյան Սեյրան
Կողմ՝ ______________ Կարապետյան Սեյրան
Կողմ՝ ______________ Շահնազարյան Արմեն
Կողմ՝ ______________ Սարգսյան Արմեն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար՝                                    Ս.Առաքելյան

24Հոկտեմբեր 2016թ. գյուղ Բռնակոթ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բռնակոթ համայնք
3507. Սյունիքի մարզ գ. Բռնակոթ, հեռ. ( 0283 ) 6-14-14, brnakot @ mail. ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 Հոկտեմբեր 2016թ                                        թիվ 26Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1918-Ն որոշման և հաշվի առնելով Բռնակոթ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 4 0---, դեմ՝ ---0, ձեռնպահ՝ ----, համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ  է.**

1. Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի առաջարկվում է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերից 0.43181հեկտար, այդ թվում.

1) պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0,08 հեկտար, որից 0,07 հեկտար /7 միավոր/ արոտավայր և 0,01 հեկտար /1 միավոր/ խոտհարք.

2) Պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 0,1 հեկտար /1 միավոր/ ոչ անտառածածկ տարածք.

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0,11806 հեկտար /1 միավոր/ այլ հողատեսք.

4) համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության <<հիդրոտնտեսական և ջրատնտեսական>> գործառնական նշանակության հողերից 0,13375 հեկտար.

փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ՝ ջրամատակարարման օբյեկտների /ՕԿՋ, պոմպակայան, կապատաժներ/ շահագործման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ՝ ________________ Առաքելյան Սեյրան
Կողմ՝ ________________ Կարապետյան Սեյրան
Կողմ՝ ________________ Շահնազարյան Արմեն
Կողմ՝ ________________ Սարգսյան Արմեն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Բռնակոթ գյուղական համայնքի ղեկավար Ս.Առաքելյան

24հոկտեմբեր 2016թ. գյուղ Բռնակոթ